# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1

ք. Իջևան «24» հոկտեմբեր 2022թ.

«ՀՀ Տավուշի մարզպետարանը», ի դեմս գլխավոր քարտուղար Արման Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ստանդարտշին ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Քարտաշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13.10.2022թ. թիվ 1606-Ն որոշման պահանջները կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<Մարզի մի շարք համայնքներում ընթացիկ վերանորոգում>>
Աշխատանքների անվանումը
աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 15.12.2022թ.:
աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, նջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով ատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն ...վիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ...ող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ___2____ օրինակ (հավելված ...3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 24965600 (Քսանչորս միլիոն ինը հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ներառյալ հարկերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[28.1]:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)

չափով:[30] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[31]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[30] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[31] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը անալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _26___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ Տավուշի մարզպետարան | Ստանդարտշին ՍՊԸ |
| ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ | Կոնվերսբանկ ՓԲԸ |
| ք.Իջևան, Սահմանադրության 1 | ք.Իջևան, Մյասնիկյան 1/31 |
| Հ/Հ900371002057 | Հ/Հ19300081812300 |
| ՀՎՀՀ 07611324 | ՀՎՀՀ 07624823 |
| Ա. Գևորգյան | Ա. Քարտաշյան |
| ------------------------------ | ------------------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Ոսկեպար*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,75 | 129,000 |
| 2 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 4,70 | 25 | 117,500 |
| 3 | Մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 14,00 | 25 | 350,000 |
| 4 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 5 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 829,500 |
| Շահույթ 11% | 91,245 |
| Ընդամենը | 920,745 |
| ԱԱՀ 20% | 184,149 |
| Ընդամենը | 1104,894 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Ղևոնդյան
---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան
1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
---------------------------------
/ստորագրություն/

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Ազատամուտ*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Մետաղապլաստե դռներ | քմ | 3,90 | 42 | 163,800 |
| 2 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,76 | 129,024 |
| 3 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 5,40 | 25 | 135,000 |
| 4 | Մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 10,50 | 25 | 262,500 |
| 5 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 6 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 923,324 |
| Շահույթ 11% | 101,5656 |
| Ընդամենը | 1024,89 |
| ԱԱՀ 20% | 204,9779 |
| Ընդամենը | 1229,868 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
______________
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարաշյան
______________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Դովեղ*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,727 | 128,945 |
| 2 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 7,20 | 25 | 180,000 |
| 3 | Մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 15,00 | 25 | 375,000 |
| 4 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 5 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 916,945 |
| Շահույթ 11% | 100,8639 |
| Ընդամենը | 1017,809 |
| ԱԱՀ 20% | 203,5617 |
| Ընդամենը | 1221,37 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Բագրատաշեն*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Հատակի ցեմենտ ավազե շերտ | քմ | 18 | 3 | 54,000 |
| | Պրեսգրանիտե հատակ | քմ | 18 | 12 | 216,000 |
| 2 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 52,82 | 126,768 |
| 3 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 4,00 | 25 | 100,000 |
| 4 | Մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 18,00 | 25 | 450,000 |
| 5 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 6 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 1179,768 |
| Շահույթ 11% | 129,7745 |
| Ընդամենը | 1309,542 |
| ԱԱՀ 20% | 261,9085 |
| Ընդամենը | 1571,451 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան
1/31
Հ/Հ193000818123000
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ**

*Բարեկամավան*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,741 | 128,978 |
| 2 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 6,00 | 25 | 150,000 |
| 3 | Մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 16,00 | 25 | 400,000 |
| 4 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 5 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 911,978 |
| Շահույթ 11% | 100,3176 |
| Ընդամենը | 1012,296 |
| ԱԱՀ 20% | 202,4592 |
| Ընդամենը | 1214,755 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Ղարդյան
------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Բերդավան*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,741 | 128,978 |
| 2 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 5,40 | 25 | 135,000 |
| 3 | Մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 12,00 | 25 | 300,000 |
| 4 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 5 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 796,978 |
| Շահույթ 11% | 87,66762 |
| Ընդամենը | 884,646 |
| ԱԱՀ 20% | 176,9292 |
| Ընդամենը | 1061,575 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան
1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Բաղանիս*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 55 | 132,000 |
| 2 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 8,40 | 21,07 | 176,988 |
| 3 | Մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 12,00 | 25 | 300,000 |
| 4 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 5 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 841,988 |
| Շահույթ 11% | 92,619 |
| Ընդամենը | 934,607 |
| ԱԱՀ 20% | 186,921 |
| Ընդամենը | 1121,528 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Ղևոնդյան
_______________
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
_______________
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Կոթի*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,741 | 128,978 |
| 2 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 5,70 | 25 | 142,500 |
| 3 | Մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 18,00 | 25 | 450,000 |
| 4 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 5 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 954,478 |
| Շահույթ 11% | 104,9926 |
| Ընդամենը | 1059,471 |
| ԱԱՀ 20% | 211,8942 |
| Ընդամենը | 1271,365 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Ղնորդյան
______________________
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
______________________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Մաքար*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Պատերի մաքրում հին ներկից | 100մ$^2$ | 1,800 | 0,3 | 0,540 |
| 2 | Դռների ապնոնտաժում | քմ | 2,500 | 0,5 | 1,250 |
| 3 | Լուսամուտների ապնոնտաժում | քմ | 9,200 | 0,5 | 4,600 |
| 4 | Առաստաղի և պատերի մաքրում հին գաջի շերտից | 100մ$^2$ | 0,62 | 0,3 | 0,186 |
| 5 | Շին. աղբի հավաքում և դուրս բերում տարածքից | տն | 6,00 | 5 | 30,000 |
| 6 | Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով | տն | 6,00 | 5 | 30,000 |
| 7 | Տեղափոխում մինչև 5կմ | տն | 6,00 | 5 | 30,000 |
| 8 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ. | 100 մ2 | 0,62 | 180 | 111,600 |
| 9 | Հատակի իրականացում պրեսգրանիտե հաստ. | մ2 | 68,00 | 9 | 612,000 |
| 10 | Սանհանգույցի կեռամիկական պատեր | մ2 | 9,00 | 8,5 | 76,500 |
| 11 | Պատերի սվաղում գաջե շաղախով | 100մ$^2$ | 1,800 | 2,5 | 4,500 |
| 12 | Առաստաղի և պատեևի ծեփամածիկով հարդարում | 100մ$^2$ | 0,600 | 2,5 | 1,500 |
| 13 | Պատերի ներկում լատեքսով /կիսափայլ/ | 100մ$^2$ | 1,800 | 2,1 | 3,780 |
| 14 | Մետաղապլաստե պատուհանների տեղադրում | մ2 | 9,200 | 32 | 294,400 |
| 15 | պատուհամնագոք | գմ | 5,40 | 1,5 | 8,100 |
| 16 | Լվացարան | հատ | 1,00 | 24 | 24,000 |
| 17 | Զուգարանակոնք | հատ | 1,00 | 36 | 36,000 |
| 18 | բախշիչ վահան | հատ | 2,00 | 5 | 10,000 |
| 19 | Ավտոմատ անջատիչ25 ա | հատ | 6,00 | 3 | 18,000 |
| 20 | Առաստաղային լուսատոի տեղադրում30W ԼԵԴ լամպով /արտաքին/ | հատ | 12,000 | 6 | 72,000 |
| 21 | Միաբևեռ վարդակի ՍՀ~220Վ տեղադրում | հատ | 6,000 | 4 | 24,000 |
| 22 | էլեկտրական անջատիչ միատեղ միաբևեռ | հատ | 12,000 | 4 | 48,000 |
| 23 | Տուփ բաժանարար | 100հտ | 0,040 | 45 | 1,800 |
| 24 | Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 3*2.5մմԱ | 100 մ | 4,000 | 60 | 240,000 |
| 25 | Ակոսների փորում 20*15մմ | 100մ | 4,000 | 20 | 80,000 |
| 26 | Ակոսագծերի գաջե սվաղում | 100մ$^2$ | 0,100 | 60 | 6,000 |
| 27 | Մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 13,80 | 25 | 345,000 |
| 28 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 9,18 | 25 | 229,500 |
| 29 | Մետաղապլաստե դռներ | քմ | 5,60 | 42 | 235,200 |
| 30 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,741 | 128,978 |
| 31 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 32 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 2940,43 |
| Շահույթ 11% | 323,45 |
| Ընդամենը | 3263,88 |
| ԱԱՀ 20% | 652,78 |
| Ընդամենը | 3916,66 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/81
Հ/Հ193000818123000
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Այգեհովիտ*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | |
| 1 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 2 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |
| | Ընդամենը | | | | 233 |
| | Շահույթ 11% | | | | 25,63 |
| | Ընդամենը | | | | 258,63 |
| | ԱԱՀ 20% | | | | 51,726 |
| | Ընդամենը | | | | 310,356 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ**
*Չինարի*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 3,00 | 25 | 75,000 |
| 2 | Մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 2,40 | 25 | 60,000 |
| 3 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,72 | 128,928 |
| 4 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 5 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 496,9 |
| Շահույթ 11% | 54,7 |
| Ընդամենը | 551,6 |
| ԱԱՀ 20% | 110,3 |
| Ընդամենը | 661,9 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Այգեձոր*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Փայտե հատակի քանդում | քմ | 15,000 | 0,5 | 7,500 |
| 2 | Պատերի մաքրում հին ներկից | 100մ² | 0,800 | 0,3 | 0,240 |
| 3 | Առաստաղի և պատերի մաքրում հին գաջի շերտից | 100մ² | 0,16 | 0,3 | 0,048 |
| 4 | Շին. աղբի հավաքում և դուրս բերում տարածքից | տն | 1,00 | 5 | 5,000 |
| 5 | Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով | տն | 1,00 | 5 | 5,000 |
| 6 | Տեղափոխում մինչև 5կմ | տն | 1,00 | 5 | 5,000 |
| 7 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ. | 100 մ2 | 0,16 | 210 | 33,600 |
| 8 | Հատակի իրականացում պրեսգրանիտե հա | մ2 | 16,00 | 9 | 144,000 |
| 9 | Պատերի սվաղում գաջե շաղախով | 100մ² | 0,500 | 180 | 90,000 |
| 10 | Առաստաղի և պատեևի ծեփամածիկով հա | 100մ² | 0,320 | 180 | 57,600 |
| 11 | Պատերի ներկում լատեքսով /կիսափայլ/ | 100մ² | 0,500 | 2,1 | 1,050 |
| 12 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 3,70 | 25 | 92,500 |
| 13 | Մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 9,00 | 25 | 225,000 |
| 14 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,17 | 127,608 |
| 15 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 16 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

Ընդամենը 1027,146
Շահույթ 11% 112,9861
Ընդամենը 1140,132
ԱԱՀ 20% 228,0264
Ընդամենը 1368,158

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան
1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Արծվաբերդ*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Փայտե հատակի ներկում | քմ | 24,000 | 3 | 72,000 |
| 2 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 54,08 | 129,792 |
| 3 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 7,20 | 25 | 180,000 |
| 4 | Մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 10,00 | 25 | 250,000 |
| 5 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 6 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 864,792 |
| Շահույթ 11% | 95,12712 |
| Ընդամենը | 959,9191 |
| ԱԱՀ 20% | 191,9838 |
| Ընդամենը | 1151,903 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Ղևոնդյան
/ստորագրություն/
Կ.Տ

Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Զորաթան*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Փայտե հատակի ներկում | քմ | 24,000 | 3 | 72,000 |
| 2 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 4,70 | 32 | 150,400 |
| 3 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,79 | 129,096 |
| 4 | Մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 13,00 | 25 | 325,000 |
| 5 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 6 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 909,50 |
| Շահույթ 11% | 100,04 |
| Ընդամենը | 1009,54 |
| ԱԱՀ 20% | 201,91 |
| Ընդամենը | 1211,45 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Տավուշ*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Փայտե հատակի քանդում | քմ | 8,000 | 0,5 | 4,000 |
| 2 | Պատերի մաքրում հին ներկից | 100մ$^2$ | 1,800 | 0,3 | 0,540 |
| 3 | Դռների ապնոնտաժում | քմ | 2,500 | 0,5 | 1,250 |
| 4 | Լուսամուտների ապնոնտաժում | քմ | 1,700 | 0,5 | 0,850 |
| 5 | Առաստաղի և պատերի մաքրում հին գաջի շերտից | 100մ$^2$ | 0,48 | 0,3 | 0,144 |
| 6 | Շին. աղբի հավաքում և դուրս բերում տարածքից | տն | 3,50 | 3 | 10,500 |
| 7 | Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով | տն | 3,50 | 3 | 10,500 |
| 8 | Տեղափոխում մինչև 5կմ | տն | 3,50 | 3 | 10,500 |
| 9 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ. | 100 մ2 | 0,62 | 3,5 | 2,170 |
| 10 | Հատակի իրականացում պրեսգրանիտե հաստ. | մ2 | 62,00 | 12 | 744,000 |
| 11 | Պատերի սվաղում գաջե շաղախով | 100մ$^2$ | 0,800 | 250 | 200,000 |
| 12 | Առաստաղի և պատեևի ծեփամածիկով հարդար | 100մ$^2$ | 0,500 | 250 | 125,000 |
| 13 | Պատերի ներկում լատեքսով /կիսափայլ/ | 100մ$^2$ | 1,800 | 2,5 | 4,500 |
| 14 | Մետաղապլաստե պատուհանների տեղադրում | մ2 | 1,700 | 42 | 71,400 |
| 15 | պատուհամնագոք | գմ | 3,40 | 1,5 | 5,100 |
| 16 | բախշիչ վահան | հատ | 1,00 | 5 | 5,000 |
| 17 | Ավտոմատ անջատիչ25 ա | հատ | 1,00 | 3 | 3,000 |
| 18 | Առաստաղային լուսատոի տեղադրում30W ԼԵԴ լամպով /արտաքին/ | հատ | 6,000 | 6 | 36,000 |
| 19 | Միաբևեռ վարդակի ՍH~220Վ տեղադրում | հատ | 6,000 | 4 | 24,000 |
| 20 | էլեկտրական անջատիչ միատեղ միաբևեռ | հատ | 4,000 | 4 | 16,000 |
| 21 | Տուփ բաժանարար | 100հտ | 0,040 | 100 | 4,000 |
| 22 | Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 3*2.5մմԱ | 100 մ | 2,000 | 60 | 120,000 |
| 23 | Ակոսների փորում 20*15մմ | 100մ | 3,000 | 20 | 60,000 |
| 24 | Ակոսագծերի գաջե սվաղում | 100մ$^2$ | 0,100 | 60 | 6,000 |
| 25 | Մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 13,80 | 25 | 345,000 |
| 26 | Լուսամուտների վրա մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 1,80 | 25 | 45,000 |
| 27 | Մետաղապլաստե դռներ | քմ | 3,60 | 42 | 151,200 |
| 28 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,7 | 128,880 |
| 29 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 30 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 2367,53 |
| Շահույթ 11% | 260,43 |
| Ընդամենը | 2627,96 |
| ԱԱՀ 20% | 525,59 |
| Ընդամենը | 3153,56 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
---------------------------------
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/3
Հ/Հ19300081812800
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
---------------------------------
/ստորագրություն/

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ
*Մովսես*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Փայտե հատակի քանդում | քմ | 32,000 | 0,5 | 16,000 |
| 2 | Պատերի մաքրում հին ներկից | 100մ$^{2}$ | 0,950 | 0,3 | 0,285 |
| 3 | Առաստաղի և պատերի մաքրում հին գաջի շերտից | 100մ$^{2}$ | 0,32 | 0,3 | 0,096 |
| 4 | Շին. աղբի հավաքում և դուրս բերում տարածքից | տն | 3,00 | 3 | 9,000 |
| 5 | Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով | տն | 3,00 | 3 | 9,000 |
| 6 | Տեղափոխում մինչև 5կմ | տն | 3,00 | 3 | 9,000 |
| 7 | Հատակի լիցք | խմ | 28,000 | 5,5 | 154,000 |
| 8 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 50մմ հաստ. | 100 մ2 | 0,32 | 450 | 144,000 |
| 9 | Հատակի իրականացում պրեսգրանիտե հաստ. | մ2 | 32,00 | 12 | 384,000 |
| 10 | Պատերի սվաղում գաջե շաղախով | 100մ$^{2}$ | 0,750 | 250 | 187,500 |
| 11 | Առաստաղի և պատեևի ծեփամածիկով հարդարո | 100մ$^{2}$ | 0,320 | 250 | 80,000 |
| 12 | Պատերի ներկում լատեքսով /կիսափայլ/ | 100մ$^{2}$ | 0,900 | 2,5 | 2,250 |
| 13 | բախշիչ վահան | հատ | 1,00 | 5 | 5,000 |
| 14 | Ավտոմատ անջատիչ25 ա | հատ | 1,00 | 3 | 3,000 |
| 15 | Առաստաղային լուսատրի տեղադրում30W ԼԵԴ լամպով /արտաքին/ | հատ | 4,000 | 6 | 24,000 |
| 16 | Միաբևեռ վարդակի ՍН~220Վ տեղադրում | հատ | 2,000 | 2 | 4,000 |
| 17 | էլեկտրական անջատիչ միատեղ միաբևեռ | հատ | 4,000 | 2 | 8,000 |
| 18 | Տուփ բաժանարար | 100հտ | 0,040 | 100 | 4,000 |
| 19 | Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 3*2.5մմԱ | 100 մ | 0,950 | 60 | 57,000 |
| 20 | Ակոսների փորում 20*15մմ | 100մ | 0,950 | 20 | 19,000 |
| 21 | Ակոսագծերի գաջե սվաղում | 100մ$^{2}$ | 0,100 | 60 | 6,000 |
| 22 | Մետաղական A3D12ամրանային ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 21,00 | 25 | 525,000 |
| 23 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 53,53 | 128,472 |
| 24 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 25 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 2011,60 |
| Շահույթ 11% | 221,28 |
| Ընդամենը | 2232,88 |
| ԱԱՀ 20% | 446,58 |
| Ընդամենը | 2679,46 |

ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ193000818123000
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարամյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Պատավաքար*

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Մետաղական A3D12ամրանայիվ ցանց 100x100մմ 300մմ անկյունակների մեջ | քմ | 2,40 | 25 | 60 |
| 2 | Մետաղապլաստե դռնակ հանգստի սենյակում | քմ | 2,40 | 55 | 132 |
| 3 | Մետաղական դռնակ փոքր 300x400 մմ լուսամուտով | քմ | 2,40 | 46,7 | 112,08 |
| 4 | Հակահրդեհային համակարգ | | | | 144 |
| 5 | Տեսագրման համակարգ անլար Wi-Fi տարբերակով | | | | 89 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 537,08 |
| Շահույթ 11% | 59,0788 |
| Ընդամենը | 596,159 |
| ԱԱՀ 20% | 119,232 |
| Ընդամենը | 715,4 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
ք.Իջևան, Սահմանադրության 1
Հ/Հ900371002057
ՀՎՀՀ 07611324
Ա. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

Ստանդարտշին ՍՊԸ
Կոնվերսբանկ ՓԲԸ
ք.Իջևան, Մյասնիկյան 1/31
Հ/Հ19300081812300
ՀՎՀՀ 07624823
Ա. Քարտաշյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*« 24 » հոկտեմբեր 2022 թ. կնքված*
*ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
«Մարզի մի շարք համայնքներում ընթացիկ վերանորոգման» **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ընդհանուր աշխատանքներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 15.12.2022թ. |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ Տավուշի մարզպետարան**
**ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ**
**ք.Իջևան, Սահմանադրության 1**
**Հ/Հ900371002057**
**ՀՎՀՀ 07611324**
**Ա. Գևորգյան**

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**Ստանդարտշին ՍՊԸ**
**Կոնվերսբանկ ՓԲԸ**
**ք.Իջևան, Մյասնիկյան 1/31**
**Հ/Հ19300081812300**
**ՀՎՀՀ 07624823**
**Ա. Քարտաշյան**

-----------------------------------
**/ստորագրություն/**
**Կ.Տ**

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

*Հավելված N 3*
*« 24 » հոկտեմբեր 2022 թ. կնքված*
*ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Աշխատանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | |
| | | | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ | 24965600 | 24965600 | 24965600 | **24965600** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ Տավուշի մարզպետարան**
**ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ**
**ք.Իջևան, Սահմանադրության 1**
**Հ/Հ900371002057**
**ՀՎՀՀ 07611324**
**Ա. Ղևոնդյան**
________________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**Ստանդարտշին ՍՊԸ**
**Կոնվերսբանկ ՓԲԸ**
**ք.Իջևան, Մյասնիկյան 1/31**
**Հ/Հ19300081812300**
**ՀՎՀՀ 07624823**
**Ա. Քարտաշյան**
________________________
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*« 24 » հոկտեմբեր 2022 թ. կնքված*
*ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ___________________________

հվհհ _________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ___________________________

հվհհ_________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 4.1*
*« 24 » հոկտեմբեր 2022 թ. կնքված*
*ՀՀՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ________________________-ին կնքված N ____________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն